

ԱՎԱՆՈՐԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ	հաւար
Տարեկան	12 ֆր
Վեցամսեայ	6 "
Արժանատիականի	
հաւար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "
Անկերիկայի	հաւար
Տարեկան	3 ֆր
Վեցամսեայ	1.50 "

Մանուկներու տղր սուս
բիւն երեսին հաւար 10 ս.
վաղ յերբին երեսին հա-
ւար 20 սակարիւն է. երե-
մեկ անկի անգամներու
հաւար 20 0/0 զեղջ կրչ
իւայ:

Վասնայի հաւար մի ֆր 10 սակարիւն

ՅԱՆՈՒՄ

ՄԱՐԿԻ ԱՐԳԱՆՆԵՐ ԲԱՂՄՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԵ ՀԻ ՏՄԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՇՅԱՐՆԻ ՕՄԻՐԸ

R. P. Kalémcarian,
(Autriche)

Եւսեփ Կէ զգում զի ի
հարկաւորութի մեծ
ցի հն
— на вѢСТНИКЪ
"СѢВЕРЪ"
на
Mechitharistengasse
Vienne

Redaction du journal
"Chirjoun"
Varna (Bulgarie)

Արժանատիականի հաւար
մեկ ֆր
(20 ՍՅԱՐԻՒՄ)
Պուշկարիոյ հաւար
մեկ ֆր
(15 ՍՅԱՐԻՒՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՎԱՐՈՒՄՈՒՄՈՒՄ ԲԱՎԱՆՈՐԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՎԱՆՈՐԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՏՐ ԵՒ ՎԵՆԵՐԻՎ ՎՃԱՐԵ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԻՍՈՒՄ

Ռ ւ ա մ ք . 16 Դ և կ ա . 1903

Դաշնակցական Ընկերներ

Քանի մը շարժաթ առաջ , Հ Յ .
Դաշնակցութեան Ռուսոմուքի Կօ-
միտէս շրջաբերականները զրկե-
լով քաղաքիս վաճառականնե-
րուն՝ կրմաջնէր սնոնց՝ լիէ մօտ
օրէն հանգանակութեան պիտի
ձեռնարկէ ի նպաստ յեղափոխա-
կան սուրբ գործին : Ասոյ վրայ
Հնչակեաններուն ներկայացու-
ցիչը , Պ . Հրահատ Կամար , մեր
ընկերներէն միուն միջոցաւ ,
Պոլիտէէս խնդրեց , որ մեր հան-
գանակութիւնը յետաձգուի՝
յայտնելով որ Ռուսոմուքի Հնչակ-
եան Մասնաճիւղն ալ գրամ հա-
ւաքելու միտք ունի : Համերաշ-
խութեան սիրոյն , Կօմիտէս՝ մի-
աձայն վճռեց որոշեալ օրուիէ
քիչ մը առեւ ետքը հանգանա-
կութեան սկսիլ :

Արգ՝ քաղաքիս Հնչակեան
Մասնաճիւղը՝ «Կերածնութեան»
վերջին թիւերէն մէկուն մէջ կը
յայտարարէ թէ 1400 ֆրանք ե-
ղած է իր կատարած հանգանա-
կութեան արդիւնքը , որու հա-
մար իր շնորհակալութիւնը կը
յայտնէ նախարարներուն , ա-
ռանց սակայն Կօմիտէիս բարո-
յական աջակցութիւնը յիշելու :
Պէտք չէ՞ր որ համերաշխու-
թեան օրինակը մեզմէ ստացող
Հնչակեան Մասնաճիւղը իր յայ-
տարարութեան մէջ չնշտէր Կօ-
միտէիս ձեռնտուութիւնը , և
այսպէսով՝ մեր վստահութիւնը
ամրապնդէր իր անկեղծութեան
մասին :

Աստի , Ընկերներ՝ , Ձեզ կա-
ռաջարկենք , որ առայժմ զգոյշ
ըլլաք Հնչակեաններէն . մինչեւ
որ անոնք համերաշխութեան գը-
րական օրինակը տան իրենց
պաշտօնական օտկան «Կերածնու-
թեան» միջոցաւ :

Ընկերական բարեւերով
Հ . Յ . Դաշնակցութեան
Ռուսոմուքի Կօմիտէ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԶՈՒՐՁԸ

«Ճարձում» վերջերս մասնա-
ւոր ուշադրութիւն դարձուց մեր
գայրոցներու վրայ : Եւ իրրեւ
նորոգական յառաջադէմ ու յու-
սաւոր միտքերու թարգման՝ տը-
գիտութեան խաւարով մթազնած
հայ կեանքի մէջ մեկը չենք
կարող զանց առնել գայրոցը ,
քաղաքակրթութեան այդ մեծ
գործօնը : Մենք լաւ գիտենք ,
որ մեռնող սերունդէն յոյս չկայ
Հայութեան դատին համար : Ե-
թէ մեզ յաջողի գիտական առողջ
ու հիմնական դաստիարակու-
թեամբ սերունդ մը յառաջ բե-
րել և կոչել գործի ասպարէզ՝
մենք տուած կըլլանք մեր ազ-
գայնակուն դատին ամենամեծ
ազգակը : Ահա հիմունքներ , որ
մենք մեր յեղափոխական տաք
գործունէութեան միջոցին չենք
մոռցած նաեւ գայրոցը , — հանող
սերունդի այդ մալղարանը :

Եւ այսօր բնա մեր խորհրդա-
ծութեան առարկան դարձած է
նորէն գայրոցը : Քիչ ատենէն
կուզան ամեական օրեր , և եթէ
մեր հասարակութիւնը նորէն չը-
յիշէ գայրոցը ու անտարբեր մնայ
դէպի մեր միակ ազգային հաս-
տատութիւնը , առող տուած կըլ-
լայ ան իր իմաստութեան և ան-
զգայութեան ապացոյցը :

Իշխան Ֆէրոյի նախ և բուլգար
հասարակութիւնը Կողմնորդի և
Մենդեան տօնի ժամ առ թիւ ազ-
քատ աշակերտներու համար նու-
էրներ յատկացուցած էն : Մեր
Վասնայի ազգային գայրոցներու
մէջ ալ ունինք ազքատ աշա-
կերտներ , որոնք գիրք չունին ,
որ կայգան և գրիչ չունին , որ
գրեն : Ի՞նչ կընէ , ի՞նչ կը խոր-
հի մեր հասարակութիւնը ..

Վառնայի մեր գայրոցներու
համար վերջապէս ընտրուեցաւ
նոր հոգաբարձութիւն : Գայրոց-
ները ունին խոշոր պակասներ :
Ձկայ գայրոցական բարձրագոյն

վարչութիւն մը , որ հաշիւ տայ ,
հաշիւ առնէ ու շարժէ կրթական
գործի միջինան :

Մինչեւ հիմա մեր գայրոցնե-
րու մէջ երբեք չէ աշխատուած
մարկազարժական և վարչական
հաստատութիւններ մը : Զը-
կայ պաշտօնեաներու կանոնաւոր
վճարում , կը պակասին գայրոցին
համար անհրաժեշտ առարկանե-
րը . օրինակի համար մեր գայ-
րոցներու մէջ չկայ աշխարհա-
գրական լաւ քարտէս մը : Գրա-
սեղանները անյարմար են , ա-
րաստապէս չուր կը կաթկթի ,
գայրոցը չունի ճաշարան մը ..
Անհատում պակասներ , որոնք
ամեն քայլին արգելք կը հան-
գիստան և կը խանգարեն գայ-
րոցին յառաջդիմութիւնը :

Նյս ամենք բարեկարգելու
համար հոգաբարձութեան պիտու-
ճէն նշտք ունի ի հարկէ գրա-
մի : Զէ աշխատուած նաեւ գրա-
մական նոր ազբիւրներ ստեղ-
ծել : Առկէ զտտ այս տարի չը
տրուեցաւ գայրոցին ի նպատո
սովորական դարձած ներկայա-
ցումը , դեռ չէ եղած աշակերտ
տուհիներու պարտատուած ձեռա-
գործներու վիճակահանութիւնը ,
դեռ չէ տրուած գայրոցին ի նը-
պատ սովորական երեկոյթը :
Մէկ խոսքով Վասնայի գայրոց-
ները ձգուած են երեսի վրայ :

Եւ ահա այս պայմաններու մէջ
պաշտօնի զրոյս կանցնի նոր հո-
գաբարձութիւնը : Կայ ահագին
աշխատանք : Յանկալի է մեզ
յուսալ , որ նոր հոգաբարձու-
թիւնը չիտխչելով ամեն աշխա-
տանքէ պիտի ջանայ օգտակար
հանգիստեալ մեր գայրոցներուն :
20րդ լուսաւորումը պարուն
մէջ կապրինք պէտք է լուրջ ու-
շադրութեան առարկայ դարձնել
մեր կրթական հաստատութեանց
վիճակը ..

Մարգարէտնի

ՓՈՒՔԻ ԹՂԹԱՍՈՐ
Ֆրիպէ , 18 Դ և կ ա . 1903
Քաղաքիս երդեցիկ — ի ա-
տերաւէր երկսեռ խումբը փո ձի

դրեր է Հայաստանի ներկայ
կեանքէն առնուած շատ հետա-
քրքրական և հրահանգիչ պիէս
մը և ղեկեմեքերի վերջերս պի-
տի ներկայացնէ Հ . Յ . Դաշնակ-
ցութեան օգտին :

Ներայացումը աւելի լաւ և հա-
ճելի ընելու համար խումբը
պիտի երգէ երկր նաեւ քառա-
ձայն երգեր , Յիշեցնենք որ , հար-
կաւ երգեցիկը տեղ պիտի տայ
մեզի ծանօթ «Կախապան» ին և
ուրիշ մեկ-երկու երգերուն ,
որոնք այ՛նքան լաւ քննարկու-
թիւն կը գտնեն հասարակու-
թիւնէն :

Խաղին մեջ պիտի պատկերա-
նայ անշուշտ նորէն հայ իրակա-
նութիւնը իր տխուր և միջիմարա
կան կողմերով , և որ կը ներկայա-
ցուի նոյն տտ տխուր իրականու-
թեանը համար կուտողներու
օգտին : Նատ լաւ ընտրութիւն
մըն է , որ ըրած է Երգեցիկ-Թա-
սերատերը և անտարակոյս պիտի
աշխատի — հիմակունէն կարժէ
ըսել — գոհ ձգել հասարակու-
թիւնը :

Ներկայացումներէն — ինչպէս
փոյճերն ալ յոյց ուռած են —
մեծ արդիւնք մը սպասելու մըտ-
քով չէ որ նախաձեռնարկ եղած է
անշուշտ երգեցիկ — Թատերա-
սերը այ գեղեցիկ գործին , ալ
ուրիշ կերպով որ աշխատութեան պլ-
տիկ բաժինը ունենալ փափաքած
ըլլալու է հայրենիքի կուող-
ներուն սգնելու գործին մէջ :
Փափաքելի էր , որ ամեն հայ
ճանչնայ իր նախարական պարտա-
կանութիւնը և ինքնաբերաբար
երթայ քաջալերելու առանկ վսեմ
նպատակի մը համար սարքուած
ատ ներկայացումը , առանց սպա-
ելու , որ սոմսակը իր ոտքը
բարեն ..

Արգիւնքը ջոյց պիտի տայ
մեր Ֆիլիպէի հայութեան գի-
տակցութեան և զգուգման շափը :
Տեսնենք :

Թղրակից

ԵՐԱՆԻՔ ԲԵՉ

Երանի՛ք քեզ, ով հայ հայրենի անձնագրո՛հ,
 Կե՛զ — մարդկային իրաւունքի մարտիկի,
 Կե՛զ, որ հետո մեր կեանքէն թող
 և անմիտ,
 Բռնաւորին զէմ անվեհեր տաս գրո՛հ,
 Երանի՛ք քեզ, որ հազարէ մէջ չը յը-
 շաց
 Ստոր կիրք մը և ոչ խորհուրդ մը
 Նըսե՛մ,
 Գուն կը գիմս նըպատակի մը վը-
 սկ՛մ
 Ճակատաւ ջինջ՛, չորթը ժպտուն,
 կործքը քաց՛ :

Երանի՛ք քեզ, որ զժրագրին ձօնեցիր
 Քու թարմ կեանքի ծաղիկները դեռ
 կոկոն՛,
 Ու սըլացար թոխք անո՞ւմ զէպի հոն՛
 Ուր որբիկներ կան սփռած ցանու-
 ցիր՛ :

Երանի՛ք քեզ, որ միշտ նեցուկ մը և
 զար
 Քաղց և ծարաւ տոռայող հայ գեղ-
 ջուկին,
 Դուն՝ զո՛ւնցիր ազգի՛դ՝ հայր՛ մայր,
 ազջի՛կ, կին,
 Ու կսպրի՛ լոկ գաղափարի մը հա-
 մար՛ :

Երանի՛ք քեզ, որ անընդհատ կոռու-
 ցար
 Եւ դեռ կոռոյս ընտելեան զէմ ա-
 ճատուած,
 Քու սրբազան արեւմտիկ են շա-
 դախուած
 Մեր սու հողը, մեր գաւառները,
 ձորն՛ :

Երանի՛ք քեզ, հազար ու բի՛ւր երա-
 նի,
 Զի դուն պիտի փշրես շվթան զո՛րբե-
 ւոր,
 Պիտ՛ հարածես պիղծ խաւարը և մի
 օր
 Այ պիտ՛ ծագի արշաւորը ծիւտի՛ն
 Վիճա

ՍՍՍՈՒՆԻ ԶԱՅ ԲԱՍԿՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ՏՐՈՒԱԾ ԽՆԴՐԱԳԻՐԸ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

8. Թուրք կառավարութիւնը վա-
 զուց յետէ գծած է իր հայաջինջ քա-
 զաքականութիւնը ու չի գոհանար
 զմեզ լոկ նիւթական ու բարոյական
 ճնշմամբ ջնջելով — ինչ որ շատ ժա-
 մանակի կը կարօտէր : Իրաւ է որ
 Երանի՛ք քեզ, որ հազարէ մէջ չը յը-
 շաց
 Ստոր կիրք մը և ոչ խորհուրդ մը
 Նըսե՛մ,
 Գուն կը գիմս նըպատակի մը վը-
 սկ՛մ
 Ճակատաւ ջինջ՛, չորթը ժպտուն,
 կործքը քաց՛ :

189...ին Սրազանք գիւղը կրակի
 տրուեցաւ եւ բնակիչները սուրի
 ժամտուեցան :

189...ին Շուշաձերկ գիւղը կրակի
 տրուեցաւ ու թալուեցաւ : միեւնոյն
 ասան Կեղաշէն գիւղը թալուեցաւ ու
 բնակիչները հարկադրուեցան իրենց
 տունները թողուլ ու հեռանալ :

189...ին թիւրք զօրքերն ու քիւրտ
 ցեղերը թալուեցին Կէլիէկիւզան գիւ-
 ղը ու բազմաթիւ բնակիչներ սպան-
 ւեցին :

189...ին Խիզանի Գէօր Սելօ քիւրտ
 ցեղապետը որ կառավարական պաշ-
 տօնեայ էր միեւնոյն Ժամանակ,
 թորք զօրքերով ու քիւրտերով ե-
 կաւ Տարսիզի գիւղերը կողոպտու-
 եւ աւերելու :

Դեռ չենք ցանկար հոս թուել բո-
 լոր մանր մունր սպանութիւնները,
 ջարդերը, կամ թալանները :

Վերոյիշեալ գիւղերէն Սպաղանք,
 Յեախնք, եւ Շուշաձերկ տակաին
 աւերակ ու անապատ կը մնան : ողջ
 մնացողները աստանդական կը թա-
 վառին ամէն կողմ, անթիւ ու մերկ :
 Չեն համարձակիր — ու չեն կրնար ալ-
 իրենց գիւղեր վերադառնալ : կա-
 ռավարութիւնը խտուի արդիւած է
 քանդուած գիւղերը վերաշինել :

Վերջին տարին Յեախնքի բնակիչ-
 ները գային իրենց արտերը ցանելու,
 բայց քիւրտերը եկան բռնի տանե-
 լու բոլոր արդիւնքը :

9. Մեր Սասունի շրջակայքը
 բազմաթիւ հայաբնակ գաւառներ կան
 բայց ամէնքն ալ վարձերի քիւրտ ցե-
 ղիւրով շրջապատուած են եւ մենէ ա-
 ճելի վատթարագոյն կացութեան մը
 մէջ կը գտնուին, ամէնքն ալ քիւր-
 տերու ստրուկն ըլլալով : Բոլոր ու-
 նեցածներն, աշխատութիւններն ու կա-
 րասիւններն կին ու աղջիկ քիւրտե-
 րուն կը պատկանին : Այս գաւառ-
 ներն են Բուսանք, Խիանք, Խալը,
 Բաշաշէն, Սիսան, Սիլիան, Հաղ-
 պօ, եւն :

Եթէ հաճիք անգամ մը սցեյլել
 մեր գաւառը, ինչպէս նաեւ վերո-
 ջիշեալ գաւառները, պիտի համոզ-
 ուիք որ հոն կառավարող անեղի
 բարբարոսութիւններն ու անթիւ գա-
 զանութիւնները նոյնիսկ ամենա-
 վարձերի ցեղերու մէջ չի անտուիր :
 Եթէ հայը ներքին բարոյական ու-
 ժով մը, կարողացած է մինչեւ այ-
 սօր դիմաւալ իր գոյութիւնը պա-
 հել, բայց այսուհետեւ անկորոշ է,
 քանի որ թուրք կառավարութիւնը
 ու քիւրտ ցեղերը օրրատու կը բազ-
 մապատկեն հայ տարին բնաջնջման
 միջոցները :

10. Մենք համառօտակի նկարագ-
 րեցինք մեր առօրեայ կեանքի պայ-
 մանները : Բայց այսօր այդ պայ-
 մանները ալ աւելի խտացած են եւ
 կերեւայ թէ կառավարութիւնը վճ-
 ապկս որոշած է այս տարի Սասու-
 նի հայութեան բնաջնջումը :

Թուրք կառավարութիւնը, Ե՛ք-
 նիքի ժող գաղտնէն ի վեր կատար-
 եալ բնակ մը հաստատօ է, Հ...
 կողուած կողմը : անթիւ զօրքեր կը
 գանձին նմանապէս Ս Օճանիւն եւ
 Աւորցայ վանքերուն, Բերդակ եւ
 մաւ գիւղերուն մէջ, պատրաստ մեր
 վրայ յարձակելու : կառավարութիւնը
 քիւրտ ցեղերուն ալ մարդ խրկեց ու
 զանոնք ամէն ժամանակի տակի
 բազմաթիւ քանակութեամբ բերել
 տուաւ զինչ պաշարելու համար : Ին-
 լոր թուրքերն ու քիւրտերը, մեծ ու

պզտիկ, այս տարի մեզ կողոպտելու
 եւ թալուելու մասին կը խօսին :

Քիւրտերու ու թիւրքերու սպառ-
 նալիքներուն պատճառաւ, ստիպ-
 ուեցանք թողուլ մեր գիւղերը, ար-
 տերն ու լնչքերը եւ լուներ ապա-
 տանիլ, վարկեանէ վարկեան յար-
 ձակուով եւ սպանով : Այսօր անտա-
 նելի դրոյթեան մէջ ենք : ոչ բնա-
 կարան ունինք, ոչ ապրելու սար-
 բական պիտոյքները - սրտասարսու-
 եւ արտաւալից՝ մեր զաւորներ կեր-
 թանք հասկաքաղիտու, ախ մը ցորեն
 տարր՛ լու եւ ուտելու համար, սը-
 նուեղի եւ զգեստի պահար հիւս-
 դութեանց մեր եւ մեր այջառներու,
 մէջ ճարակութիւն պատճառ եղած է,
 իսկ քիւրտերը շարունակաբար մեր
 գիւղերէն շուրջը կը յամին եւ յար-
 ձակելու ատիժ կորսնեն : կեանքը
 այսիս տանիլ չէ հոս :

Քիւրտերու ըսածին նայելով՝ կա-
 ռավարութիւնը կը ջանայ գիրենք
 մեր վրայ զիջել շուտով, յառաջի
 կային պատասխանատուութիւնը լոկ
 անոնց վրայ ծանրացնելու համար,
 իսկ քիւրտերն ալ կուզեն որ նախ
 կառավարութիւնը շարժի, որպէս զի
 յետոյ իրենք օգնութեան գան : Ա-
 մէն օր գիւղերական պետեր, հա-
 միտ է գնդապետեր մեր շուրջի քիւր-
 տերուն մէջ կը պատին զանոնք կը
 գրգռեն օգնութիւն խոստանալով,
 եւ նոյնիսկ գէնք կը բաժնեն, վա-
 առջի ու գնդակի հետ : կրնանք զայս
 հաստատել :

Մենք փոքր ժողովուրդ մըն ենք,
 այդպիսի, բայց երբ կառավարու-
 թիւնն ու քիւրտերը վրանիս յար-
 ձակին, մեր ուժերուն չափով պիտի
 դիմադրենք, մինչեւ մեր վերջին
 շունչը, եւ պիտի պաշտպանենք մեր
 իրաւունքները : Քիւրտերը թէ չենք
 կրնար մինչեւ վախճանը գիմանալ :
 բայց նախամեծար կը համարենք մի-
 անգամ ընդ մէջու վերջ մը գնել այս
 անկ կեանքին փառաւոր ժահով մը,
 փոխանակ թող տալու որ զմեզ խեղ-
 դամա՛ ընեն ոչնչացնելու պէս, կամ
 ստիպորէն ու անարգաբար ծառայելու
 կառավարութեան եւ բարբարոս քիւր-
 տերուն :

ՓՃԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

(27)
 ՆՈՒՆԵՐ Ս. Զ. — ԻՆ
 ԳԼՈՒԽ Դ.

Մարկոսովի խօսքերի ճնշող շեշտը՝
 փոքրիկ Իւլիայի վշտահար թռչնիկի
 պէս գլուխը հօր թեւի տակը կոխե-
 լով ծանր սպառնութիւն դործեցին
 իրերի վրայ : Մանաւանդ նաեւ ժ-
 աան և Գրիգորովի կիներ իրենց շատ
 անյարժար կացութեան մէջ զգացին,
 որի գլխաւոր պատճառն էր այդ ա-
 մուսնական զոյգի տարբեր ցեղերից
 կազմված լինելը և որի նմանը ներ-
 կայանում էին և իրենք :

Մի անժամանակ լուսնի տիբեց
 և ամին մէկը կարծես անձնական
 վիճակի մասին խորհրդատու թեան մէջ
 ընկաւ :
 Արշակը էլ չի կարողանալով տո-
 կալ այդ ճնշող լուսնեան, խզեց՝ իր
 խօսքը Մարկոսովին ուղղելով :
 — Կարծում եմ որ դու, Մարկո-
 սով, չարագանցութեան մէջ ընկար
 ու չը կարողացար ինքզինքդ զսպել :
 Ինչ կարիք կար կոնջ հետ, մեր
 ներկայութեանը, որչափ էլ որ մօ-

պիկ բարեկամներ եւք, այնու աւե-
 նայիւ օտար ենք, այլպիսի երկ-
 սայրի վիճաբանութեան մէջ մանել :
 Հաստատուած եմ որ եթէ մեր ներ-
 կայութիւնը չը լինէր, Մարկոսեան
 էլ այնքան ծայրահեղօրէն քեզ չը
 պէտք է հակառակի իւլիայի կրթու-
 թեան խեղդի մէջ :

— Մանաւանդ որ, ընդմիջեց Գը-
 րիգորովը, խնդրեալ այնքան էլ կա-
 թեւոր խնդիր չէ. բաւական է որ
 փոքրիկը դաստիարակվի ապագային
 լաւ կին և լաւ մարդ լինելու հա-
 մար : Կուզէ թող կրթութիւնը հա-
 յերէն լինի, կուզէ առւեսիւն, իմ
 կարծիքով այդտեսակ մի շնչին պատ-
 ճատով, ոչ միայն մեր ներկայու-
 թեանը, այլ եւ ստանձին մնացած
 ժամանակ չը պէտք է փոխորկէք
 ձեր ընտանեկան կեանքը :

— Երկուսդ էլ սխալվում էք, պա-
 րտենք, առօրեայ Մարկոսովը : Այս
 ինչքի ձեր ներկայութեանը բաց-
 վելուց ոչ մի փնտս չի հասնի՝ ինձ
 և իմ ընտանեկան, մանաւանդ որ
 շատ անգամ բացվել է իմ և Մարկո-
 սայի միջեւ : Ընդհակառակը, իմ
 կարծիքով, շատ լաւ եղաւ որ ձեր
 ստջեւ բացվեց, որովհետեւ դուք էլ
 ամուսնական չոյն պայմանների մէջ

էք գտնվում : Ն. և և շատ կարեւոր
 խնդիր է, հակառակ Գրիգորովի շն-
 չին նշանակութիւն տալուն, որով-
 հետեւ օտար ցեղերից կազմված ա-
 մուսնական զո. գերի մէջ տեղի ու-
 նեցող անհամաձայնութիւնների տ-
 մենախորշը պատճառներից մէկը ներ-
 կայանում է երկուսի կրթութեան
 և դաստիարակութեան խնդիրը :

Հայր և մայր ստանձին ատանձին թէ
 սքողված և թէ յայտնի կերպով աշ-
 խատու են իրենց գաւակին տալ ի-
 րենց ցեղի յատկանշական կրթու-
 թիւնը : Մնողների մէջ տեղի է ու-
 նենում երկարատեւ մի պայքար, ո-
 րի միջոցին թող յաղթվում է և
 երախայի դաստիարակութեան զեկը
 անցնում յաղթողի ձեռքը : Այս պա-
 րագային մէջ մասամբ յաղթում են
 կիները, որովհետեւ նրանք միշտ
 փոքրիկ երեխայի հետ են լինում և
 Երբեմն պայքարը աւելի ծանր հե-
 տեւանքներ է ունենում ընտանիքի
 համար, եթէ ծնողները երկուսն էլ
 չսփառանք ցեղի միջին :

Երբեխային պէտք է կրթել այն-
 պէս, որ նա լաւ մարդ լինի ստու-
 էք դուք, շատ լաւ, դա այնպիսի
 մի ճշմարտութիւն է, որի զէմ վի-
 ճիլ չէ կարելի, բայց միթէ հայրց Գ

հայերէն լեզուով կրթելով լաւ մարդ
 չէ՛ կարելի կազմել...

Ես չեմ պահանջում որ իմ իւլիան
 միայն հայերէն սովորի և հայ ազգին
 ծանոյցի. ընդհակառակը պահանջում
 եմ որ նա լաւ սովորի թէ հօր և թէ
 մօր ցեղերի լեզուն, նրանց ճանաչի
 իրենց լաւ և վատ կողմերով : Զատ-
 կը ինձ և Մարկոսեային է պատկա-
 րում, միթէ՞ պէտք է որ իմ հայ-
 կական իրաւունքը բոլորովին ոտքի
 տակ սամ, մամ աւանդ երբ կտա-
 րոււմ եմ իմ պայտականութիւնները :

Սյո, տարբեր ցեղերից լեզուով
 ամուսնական զոյգերի բոլորի առջեւ
 էլ ժամանակին ցցվում է այս խն-
 դիրը. երբեմն շատ սուր կերպարանք
 ընդունում և երբեմն էլ թոյլ : Սուր
 կերպարանք ստացած միջոցին, զէպի
 հարագաւ ցեղը ձգտելու ժամանակ
 կան յատկութիւնը ջարջախոււմ է
 անհատական սիրուց ստեղծված ա-
 մուսնական զանակցութիւնը և զոյ-
 գը կազմողներից մէկին ակամայ բա-
 նակալ զարձուում : Փրկութիւնը մի-
 այն փոխադարձ և հաւասար չափով
 զիջողութիւններին մէջ է. աղպիսով
 միայն թէ հայրը և թէ մայրը կը փո-
 կեն իրենց ընտանեկան հանգստու-
 թիւնը, երբեմնից կազմվեն ի՛

Եւ եթէ բանակն ու ցեղերը դեռ երկար մեր զօրքն ամենքս ալ անօթի կամ ցլտաճար պիտի մեռնինք, եւ կամ պիտի ստիպուինք յարձակում գործել վրանին, զաւել հրաւիրելով զիրենք. եւ ասով ներկայ դրուածն զերջ մը տալ:

Վսեմութիւն, անաստիկ համաստակի մեր անցեալն ու ներկայ դրուածութիւնը. եթէ ճշտութեամբ եկած էք մեր հայրենի տառապանքն, որ իմաստաւորապէս անհասկնալիք իմաստաւորապէս մեր ինքնազգիքը ներկայացնել ձեր վիճակաւ կայսեր ու իր մարդասէր կառավարութեան. եւ եթէ ճշտութեամբ մեզի օգնել կուզուի, թող փութով գործադրուին խոստացեալ բարենորոգումները, եւ թէ հիմա չճշտութեամբ, յետոյ շատ ուշ պիտի ըլլայ: Կը պահանջենք զոնք, որ թուրք կառավարութիւնը ստիպան մեզի ազատօգնել զենքի գործածութեան իրատուութեամբ. որ պէտքի կարենանք պաշտպանել մեր կեանքը, ինչքը, պատիւը այս գազան աւազակներու դէմ:

Իսկ մենք, այս բողոքագրին պատճենները պիտի զրկենք եւրոպական միւս պետութեանց ներկայացուցիչներէն, եւր անոնք ալ Մոսկուէն: Կը սիրենք յուսալ թէ, յանուն բարեստեման, մարդասիրութեան, պիտի մտնի ընէք մեր արտունջները, ու պիտի գործադրէք ինչ որ հարկ է, Այս ակնկալութեամբ, մեր երախտագիտութիւնը կը յայտնենք ձեր վեհափառ թագաւորին ու իր մարդասէր կառավարութեան:

Ստորագրութիւնք

Շէնիք, Կեղաշէն, Սասուն
Կէլիկի, Գան, Շուշաներկ,
Արպէս, եւն գաւառներու եւ
գիւղերու բնակչութիւնը:
(Իրո Արմենիա)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՄԱԿԵՊՕՏԻԱ



(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Այս բոլոր տեղեկութիւններէն ետքը, երբ մարդ կը կարգաւ

Աւարտից ներքին գործերու նախարարին պատուիրակութեանց առջեւ ըրած յայտարարութիւնները, կամ Պրանսայի արտարին գործոց նախարարին երեսփոխանաց ժողովին տուած պատահական խոսքերը, մարդ զգուշութեամբ սրկեց պաշտօնատարներուն հանդէպ, որոնք քաղաքակրթութեան ու մարդասիրութեան անունով խօսելու մեծաշնորհք վերանին տուած են: Բայց անշուշտ, մտածումնային կէն պիտի հասկընան այդ կարգի մարդերը որ, տառապանքը կատակ չի գիտեր, ու պիտի վարձուրին թերեւս, երբ անոնքն սր երկու բազմակից ազգերը ձեռք ձեռքի տուած, Հայաստանի ու Մակեդոնիոյ, եւրոպայի ու Կոստանդնուպոլսոյ մէջ կատարուին, իճապահանքէն, յուսահատ անցման ժամանակ մը ջնջել եւ ջնջուելու կամ փրկուելու անխախտ որոշումով, պիտի կոնուրն գունէ իրենց մահէն ետքը պատմութեան մէջ փոստուոր անուն մը, իսկ քաղաքակրթութեան ճակատին անջնջելի թուրք մը դրոշմելու համար:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Եւշուէ 16 զեկ: 1903

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան տեղիս կոմիտէն հրապարակաւ մեծ ժողով եւ հանդէս մը ունեցաւ: Բաղաժէս եւ շրջակայքէն խոսն բազմութիւն մը ճիշդ որոշուած ժամուն փութացած էր ներկայ գտնուիլ ժողովասարահր ամբողջովին լեցուած էր, այնպէս որ շատեր ստիպուած եղան մինչեւ վերջը ոտքի վրայ մնայ: Ներկայ էին նաեւ մի քանի ամերիկացի բարեկա եր,

Կրկին տիրեց ճնշող լուսթիւնը: Այդ զգումը ծանր շատ ծանր տապաւորութիւն գործեց ունկնդիրներին վրայ, նաեւ ժամանակ քորովին այսպէս կերպով. կայծակի աչքուտիւններ նրա մտքով անցու որ Մարկոսովը զիտմամբ իրենց ներկայութեանը այդ խնդիրը այդպէս բուռն կերպով շօշափեց, որպէսզի Արշակը ազդի եւ ետ կենայ ամուսնութիւնից. նա իր բոցավառված, թափանցող նայուածքը ուղղակի միտք Արշակի սչքերի մէջ, կարծես հասկանալու համար թէ Մարկոսովի խոստովանութիւնը ինչ նոր մտքեր ծնեցրին նա ուղեղում:

Արշակը նկատեց իր նշանածի այդ խորհրդաւոր եւ կատակոտ նայուածքը. իր աչքերը քաշ տեց եւ դառնալով Մարկոսովին ասեց.

— Ըստ Մարկոսով, ի վրան գրկուող քնեց: Մեղք է երեխան, տար պտուկեցրու:

— Վնաս չունի, գառնութեամբ առարկեց Մարկոսովը: Իւլիայի հետ այստեսակ զկպերը շատ է պատահել եւ կարծում եմ թէ այս էլ վերջինը չը պէտք է լինի: Արեւի լաւ որ քընացաւ. թի մէջ անցածը կը մոռանայ:

Ինչպէս նաեւ տեղիս ամերիկեան երկու թերթերու թղթակիցները, որոնք յետոյ ընդարձակ տեղեկութիւններ տուին իրենց թերթերուն մէջ զաշնակցական ժողովին մասին: Ատենապետ Պ. Վ. Մ. Ինճէեան քանի մը հակիրճ խօսքերով բացաւ ժողովը եւ յիշեցուց ամեն հայի պարտականութեան գործը, Պարոնը բտա թէ՛ հայ բանորը իր արին քրտնքով վատխառն մը քանի տարբեր թող դրնէ յեղափոխութեան սուրբ սեղանին վրայ, որովհետեւ հայ հարուստը միայն իր կաշին ազատուելու մասին կը խորհի՝ զիմով սարկական ամէն միջոցներու: Յետոյ լսեց եւս Պ. Ն. Թաղէտեան՝ երկայն եւ սեւ մօրուքով, հագած հայաստանցի շավարրու վերաբերուն: Ինչ ծիծաղաշարժ ձեւով մը խօսեցաւ միկիտի քարոզչութեամբ ամէն ալ խնդացուց. կրկին ու կրկին ծափահարութեան վրայ, պարոնը նորէն բեմ ելաւ եւ այս անգամ երգեց «Դէ՛հ մանիք, մանիք» կերպը: Օրորող նուազ Մարգրիտան կարգաց յեղափոխական ոգով գրած իր մէկ սիրուն ճառը: Օրորողը ունկնդիրներու վրայ ձգեց լաւ սպաւորութիւն:

«Հայրենիք» խմբագիրը Պ. Ս. Կոստան չէր կրած ներկայ ըլլալ անոր տեղ խօսեցաւ Պ. Արամ—Աշոտ Պարոնը կորովի շնչով մը պարզեց հայ անցեալ փառքը եւ ծանրացաւ Հայաստանի ներկայ տագնապայից զրոյթեան վրայ՝ «վայրկեանը ճգնաժամային է պէտք է ազգովին յեղափոխութեան փարինք»: Լսաւ ճառախօսը, Յետոյ ան խօսեցաւ Դաշնակցութեան գործունէութեան մասին եւ կենդանի փաստերով ցոյց տուաւ, թէ Դաշնակցութիւնը ունի իր կենդանի գործը բուռն երկրի մէջ, խօսելով Դաշնակցութեան դասի գործունէութեան մասին, պարոնը բտա, որ իրո Արմենիան կենքը առաւ եւ կը շարունակէ ապրիլ զաշնակցականներու միջոցաւ: Մենք զաշնակցականներս ենք, որ երոպական շրջաններու մէջ յատալ կը տանէիք հայկական պրօպագանդը: Պարոնը զղուան

քով խօսեցաւ այն ազգայնաւ կարգ մը մարդոց մասին, որոնք մեծ գրադէտի հովեր առնելով իրենց արհեստ ըրած են յեղափոխութիւնը եւ կը շահագործեն զայն. յարուցանելով ճանկահայի եւ Ռուսահայի խնդիր ուսով հակառակութիւն սերմանելով մեր մէջ: Մենք կըրոյնք ներս, ըստ ճառախօսը, Ռուսահայրու օգնութիւնը մենք սիրով կրնուենք եւ երախտապարտ ենք անոնց:»

Ճառուն վերջ եկան մ. քական յայտարարելով ներկայացուցիչներ, Ամենին առաջ տեսանք Պետրոս Սէլվմանը՝ իր պոլիտար սպայի համագրեւտով եւ հայրկալին սարազով: Հնչեցին մեր ակնջին նորէն Պետրոսի խօսքերը՝ արտասանած կոխազանին տակէն—«Կազափար կոխազան չըլլեր ու Ամենուս մարմինն անցաւ սրբազան սարսուտ մը: Այն սերելի ընկեր իմ, գուն մեռար բայց քու զաղափարը չմտաւ. քու տեղը հարեւար որքեր յաջորդեցին, քու յիշատակը յաւերտան պիտի մնայ մեր սրտին մէջ:

Հանդիստ քո սկորներուն, Յետոյ մենք տեսանք Պետո Աւետիսեանը եւ այն կարգ մը հերոսները, որոնք ինկած են հայրենիքի փրկութեան համար, պատկերները դեռ չը լրացած, յայտերը կրկին անգամ սկսեցին վառել եւ սրահը լուսաւորուեց լ. Պ. Յ. Գաւառեան, որ պատահամբ ներկայ կը գտնուէր, երգեց «Եւր լօսն, երկրորդ ատենախօսը եղաւ ամերիկայի զաշնակցական գործիչներէն Պ. Աղէքսանդր Տիգրանեան, որ խօսեցաւ յուզուած ու կրակոտ շնչով մը եւ յուղեց բոլոր ժողովականները, խօսեցաւ շատ պարզ ու հայ, երեսներին անկեղծ հաւատքով մը, իսկ ցրաւ հայ ժողովրդի կրած տառապանքները եւ անոր տողունութիւնը կենդանի օրինակներով ցուցուց թէ հայ ժողովուրդը պիտի ապրի, որովհետեւ անկեղծ իր մէջ ունի ժիրայրներ, Պետոներ վազկէններ եւ Մուրատներ, որոնք իրենց հայրենիքի սիրուն համար զոհուեցան եւ բարձր պահեցին իրենց հայրենիքի պատիւը: Մտեցաւ երկրի յեղափոխութեան մասին եւ բտա, «Ինչպէս աս

— Է՛հ, Մարկոսով, եղանակով առարկեց Աշոտը, այսօր դու բայցար ճակագլս ներարդային եւ գործել, քո անտեղի բացարձակութիւնով ուղեւս եւ մեզ քնել, ապա խօսքը ուղղելով նաեւ ժամանակն եւ միտքերին շարունակեց. նաեւ ժամ, Գրիգորով ակիին, վեր կուցեք, գնանք, պարզ է որ Մարկոսովը ճանձրանում է:

— Այո, այո, ճանձրանում է, պատասխանեցին ամենքը, մենք եկտը այստեղ ուրախ ժամանակ անցակցանքն: Ընդհակառակը սիրեցինք: Մարոսեան էլ իր սենեակում դիակ վեց:

— Ոչ, ոչ, ես չեմ ճանձրանում, քոյց գգում եմ որ ձեզ ճանձրանում եմ ձեզ չը հետաքրքրող գործերի մասին խօսելով: Շատ եմ ցատում որ այս միջակցւլը ձեր ներկայութեանը տեղի ունեցաւ եւ այս երեկոն այնպէս անհամ անցաւ:

Բայց ինչ սրած, կեանքը առանց գառնութեան չէ, ինչպէս վարդը առանց փշի: Կեանքը սիրողը ազատ չէ մնում նրա գառնութիւններէն, ինչպէս վարդ սիրողը նրա փշերի խայթելուց, աւելի վշտահար պատասխանեց Մարկոսովը:

Վերջին խօսքերը կիրարկին ըս

սիրպիցին աւելի շտապել, նաեւ ժամանակ եւ Գրիգորովի կինը հօգիւ կարողացան Մարոսեայի սենեակը մասնել եւ նրան հրաժեշտի ողջոյն տալ:

Վերջապէս տունը հիւրերից դատարկվեց. Մարկոսովը որ իւլիան գրկումը նրանց ճամբու գրեց, կրկին վերադարձաւ սեղանատուն եւ նստեց իր սթոփի վրայ:

Նա այդպէս երկար նստեց, ու տխրամտ գիտում էր անկարգ վեճակում գտնուող սեղանը, որի վրայ ցցվել էր վաղուց մարած եւ տնչուկ ստամոքսը: Այստեղ այնտեղ մտաբեր էին թէ յով կիստա բաժակները, իրր նշան հիւրերի արքայադրութիւնների փոշանալուն:

Նա մի խորը հատուցանք արձակեց եւ յանկարծ աչքերից դուրս ժայթքեցին խոշոր, դառն, տղամարդի գորով հոտող արցունքի երկու կաթիլներ: Այդ վայրկեանին յանկարծ իւլիան սթափվեց եւ իր քնաթափախ մահկանան անմեղ աչքերով հօր դէմքին նայուց վշտ բեկ սրտով թոթովեց:

— Բայց հայրիկ, դու լաց են լինում...
Վ.Ա.Դ.Կ
(Վերջ երկրորդ ՄԱՍԻ)

մէն տեղ, նոյնպէս Հայաստանում, յեղափոխական գործը լայն ծաւալ է ստանում, այսօր այն հայր աշխարհում զոգնել է թէ հայրենիքի փրկութեան միակ միջոցն է յեղափոխութիւնը: Ամերիկայի հայեր, ձեր վրայ է ծանրանում մեծ բաժին, պէտք է անպատճառ ցոյց տաք զրազան փաստերով թէ զուր էլ հայեր էք եւ գիտէք օգնել երկրում կրօնող հերոսներին... եւ պէտք է յարգանքով նայիք այն հայրենիներին, որոնք Սուլթանի բարբարոս բէթմինի զոհ գնացին, վտանգ եղիք թէ յեղափոխական գործը վաղ թէ ոչ պիտի յաղթանայէ: Երկրի կռուողներուն օգնելու պէտքը չեւոյց եւ իր խօսքերը վերջացուց հետեւեալ կերպով. «Ինչ կորչի Սուլթանի բարբարոս բէթմինը եւ թող սպասի Հայաստանը ու Մամեդանին», (ծափահարութիւններ կրկին ու կրկին սաղամ):

«Կարկուտ տեղացս ֆէտայական երգով ժողովը փակուցու: Յետոյ հանգանակութիւն մը ցատուեցաւ եւ շուտով հաւաքուեցաւ 7:0 տղար:

Այդ օրը նէշտըցիներու շարքի մտնալը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրթական նախարարը մտադրութիւն ունի Սօֆիայի բարձրագոյն ուսումնարանը զրազանութեան, իրաւարանութեան եւ բնական գիտութիւններու ճիւղերով համալսարանի մը վերածել:

—Ազգային ժողովին մէջ երեսփոխան Մամեդիով բողոքեց Յանքովի Բեթերապուրի զրկութիւնը զէմ եւ աւելորդ համարեց անոր օրական 150 ֆր. գումարի մը վճարումը: Իէթով յայտնեց, որ Յանքով զրկուած է միայն Յարին նուէր մը տանելու համար եւ թէ 150 ֆր. վճարումը որոշուած ըլլալով փոփոխութիւն կարելի չէ մտցնել:

—Սուրիֆեյէնցի ուսանողները ի նպատակ Փոքր-Ասիա աքտորուող պուլիարներու հանգանակութիւն մը ըրին. իշխանը նուիրեց 300 ֆր., իշխանուհի կիջ մանդէ 200 ֆր.

—Պուլկար Էքզարքը բողոքեց Բ. Իրան յունագաւաններու Մակեդոնի մէջ կատարած պրօպագանդին զէմ: Իրուք խոստացաւ պէտք եղածը տնօրինել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Սուլթանի նախագահութեամբ երլուրդի մէջ գումարուած է նախարարական ժողով մը մակեդոնական բարենորոգմանց վրայ խորհելու համար: Արիւնարբու Գաղանը ահա նորէն կը գիմէ իր նենգ ու աղուէսական միջոցներուն, ան կուզէ այսպիսով ժամանակ շահիլ ու մոռացու-

թեան մտանել Մակեդոնական հարցը:

Բ. Իրուք շշուկներ կը տարածէ, թէ մահմեդական ազգաբնակչութիւնը պիտի զիմագրէ եւ թող չը պիտի տայ եւրոպացի պաշտօնեաներու մուտքը Մակեդոնի մէջ, թէ անոնք որոշած են սպաննել պետութեանց գարծակալները եւ ջարդել քրիստոնեաները: Պետութեանց գրասպանները սակայն խաբուելու տրամադրութիւն ցոյց չեն տար այս անգամ եւ կը գնեն վճռական պահանջներ: Բայց 6^րը տեղի պիտի տան այս պահանջները զորդանական քայլի մը:

—Պուլկարիոյ զէմ պատերազմի մը հասանակաւութեան վրայ հիմնուելով, Թուրքիա կը տեսնէ պատրաստութիւններ: Կունդերը զէնքի տակ կը կանչուին, Պուլսոյ շրջակայքը, նոր ճամբաներ կը շինուին:

—Բ. Իրուք երկու պետութեանց զեպաններուն հազարդեց, որ 35 հոգիէ բաղկացեալ հայրենակային խումբ մը Սիմանլիի մօտ փորձած է անցնիլ սահմանը, բայց թիւրք զօրքերէ ետէ մղուած:

—Իւսթրիայի մէջ Ֆրիմիլեանի եղած է շքեղ թուղում: Սերպիա Իրան գիմում կընէ, որ նորէն սերպ մը նշանակուի Ֆրիմիլեանի տեղը: Յոյները կը հակառակին:

—Յունաց թագուհին ճամբորթութեան միջոցին Պուլիս հանդրպատ է Սուլթանը իր հիւրին տուած է նուէրներ:

—Չինովիթի եւ Երլուրդի ներկայացուցիչները ունեցած են ժողովներ: Իրեքերը սկզբունքով ընդունած են օտարկանութիւնը կայմակերպելու համար իտալացի սպայի մը անուանութիւնը:

Ա Ւ Ս Տ Ր Ի Ս

Աւստրիոյ Պուլսոյ զեպանը պարոն Յոն Գալիչէ կը տօնէ իր պաշտօնավարութեան յիսնամեակը: Ան 23 տարիէ ի վեր կը վարէ Պուլսոյ իրազօր զեպանութիւնը: Կայսրը վիէննայէն զրկեց շնորհատրական հեռագիր:

ՊԱՐԱՎԱՍՏԱՆ

Պարսկաստանի մէջ Անգլիոյ եւ Ռուսիոյ մրցումը երթալով կը սաստկանայ: Անգլիացիք Իրուրաէթթի մէջ հաստատեցին հրապատուարան մը եւ հիւանդանոց մը՝ ուսական աղքեցութեան զէմ կուտելու եւ ժողովրդականութիւն շահելու նպատակով:

ՖՐԱՆՍԱ

Տրէյֆուլի հարցի վերաքննութեան խնդիրը ընդունուած է: Գաղմուած է այս նպատակաւ գործելու համար յաւանարումը մը, հրեւի սոյն վերաքննու-

թեամբ Տրէյֆուլի հարցը պիտի գտնէ իր վերջնական լուծումը:

—Սլոն խորհողներու Բարիլի մէջ գումարած համաժողովը ընդունեց բանաձեւ մը, որու մէջ փոփոք կը յայտնուի ազգերու մէջ ստեղծել ընդհանուր համերաշխութեան կապեր եւ աշխատիլ համամարդկային ազատութեան համար:

Ի Տ Ա Լ Ի Ս

Նախկին նախարարապետ Մանարտէլի մեաւ է: Հոռովի մէջ կատարուեցաւ թալման շքեղ հանդէս:

—Պապը կալտինալներուն ուղղած պաշտօնագրով մը կարգիլէ եկեղեցական երգեցողութեանց մէջ կանանց մասնակցութիւնը:

—Ռուսներ մօտ պիտու մը կատարուած միջոցին գտնուած է անտուկ մը լեցուն ոսկի եւ հաւատարմած է, որ անտուկը Կրիստոսի յինգենէն 57 տարի ետքը թաղուած է:

Այս հնութիւնը կարծէ ալմ 1.000.000 ֆր.

ԳՆՐԱՆԻՍ

Կայսրը Համպուրկի մէջ ճաւճը խօսելով շեշտեց թէ Պիլիսերի օգնութեան հաննելովը վաթէրլոի մօտ անգլիացիք ազատեցան եւ նաքուէն պարտուեցաւ: Անգլիոյ մամուլը խիստ կերպով քննադատեց կայսր յայտնած այս միտքը:

—Գրիմիշուի բանուորները զործադուրրած են եւ կը պահանջեն օրական միայն 10 ժամ աշխատանք: Պէրլինի կանանց ընկերութիւնները ժողով կազմելով նոյն պահանջը դրած են նաեւ բանուորուհիներուն համար եւ որոշած են գործադուր ընդունուելու պահանջ:

ԱՆԳԼԻԱ

Սոմալիլանտի մէջ անգլիական զօրքի եւ տէրվիչներու միջեւ պատահեալ կատաղի կռիւ մը ինկան 80 տէրվիչներ, վիրաւորուեցան 100 հոգի: Անգլիացիք ունեցան աննշան կորուստներ:

ԻՐԱՆԻԱՅԻՆ ԱՐՄԵՆԵԼԻՔ

Ճարտնական մամուլը խորհուրդ կուտայ կառավարութեան Քօրէազօրք զրկել եւ Ռուսիոյ զէմ պաշտպանել երկրին շահերը:

Ճարտնական կառավարութիւնը պատասխանելով ուսական իշխանակազրին, յայտնած է, որ իր պահանջներէն ելքէք ետ չի պիտի կենայ:

—Չինաստան լրջօրէն կաշխատի խաչածել ուսական ծրագիրները: Մանչուրիա քարոզչները գայած են ժողովուրդը Ռու-

սիոյ զէմ զրգոելու համար, անոնք չը գործեն յաջողութեամբ: Չինաստան կը հաստատէ զինուորական գաղտնիք, կը գնէ նոր զէնքեր եւ ամէն շաք ի գործ կը զնէ բանակը զօրացնելու համար: Այս ամենը անհանգիստըրած են Ռուս ազգամուլ եւ շովինիստ մամուլը:

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

Ե. Թովմեանի խմբ գրած պատմ. բազարդ

ՎԱՅՍ

Գրպանի, Պասի եւ Սեղանի օրացոյցները:

«ՎԱՅՍ» օրացոյցների ՆՊՍՍԱՆ է գիտութեան լոյս սփռել ժողովրդի խաւար խաւերում: Նախ եղածի չափով պ տկերացնել նայն անցաւ ու ներկան, մտական կռիւ մղել այն հրատարակութիւններին զէմ, որոնք նիւթական շահերից զրգուած սնապատուութեան եւ սգիտութեան սերմեր են ցանում ընթերցողներին շրջանում եւ աւասարակ ընթարցանութեան օգտակար նիւթ եւ անհրաժեշտ գիտելիքներ տարածել:

Սյ յպատակին հասնելու համար մենք չենք խնայելու ջանք եւ ոչ նիւթական միջոցներ, աշխատակցութեան ենք հրաւիրել յայտնի եւ զինակներին ու մասնագէտներին, բոլոր երեք օրացոյցներին էլ պատկերազարդել ենք յատուկ պատրաստել տուած նկարներով, իսկ սովորականութիւնը գաւառերէն էք արնպէս, որ օրացոյցներին իւրաքանչիւր տեսակը տաննին վերցրած մի ամբողջութիւն կազմէ եւ միւսնոյն ժամանակ ցանկալի ու օգտակար լրացուցիչ լինի միւս երկուսի համար:

Պուլկարիայում գնել փափաքողները թող գիմեն Բուշուք Մ. Պատմահանի:

Գիրներ են. Դրպանի մէջ ֆր. Պատի 1,50, Սեղանի 3 ֆրանք:

Ծանօթ.— Գնողներու գիւրութիւն ընտանելու համար դրամի փոխարէն ընդունում են նաեւ Պուլ. նամակադրօշմ: Բօստի ծախսը վաճառողին վրայ:

ԿԱՐԵՒՐ Ա.ՁԴ

Ճամբորդներու Համար

Նախկին Օթէլ Ռոտօփի եւ այս ամառ Հիւսարի մէջ Օթէլ Պուլկարիա վարձակալ Աստիկ Սրապեան, այժմ բացած է պանդոկ մը Ֆրիլպէի Մեծ փողոցին վրայ:

ՕԹԷԼ ՍԱՆԹՐԱԼ

Անուամբ: Յաճախողները գոհ պիտի մնան մաքրութենէն եւ արագ ծառայութենէն:

Տնօրէն

Աստիկ Սրապեան
6 Նոյեմբեր, 1903
Ֆրիլպէ

Է. ԱԿՈՒՆԻ

ԿՈՎԱՍՍԵԱՆ ՎԵՐՔԵՐՈՒ

Գիրն 3 ֆր. 20 սթ.
Գնելու համար գիմել վառնա Բարկէն Սիւնի ընթերցարանին վարչութեան: Ծանապարհածախսը գնողին վրայ է: Դրամը կանխիկ վճարելի:

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна